



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
ՀՐԱՄԱՆ

No _____

« _____ » _____ 2016թ.

761-Ա/2, 25.07.2016թ.

ՆԱԽՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ (ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ) ԵՎ ՄԻՋԻՆ
ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԻ
ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՎԵՐԱՆԱՅՄԱՆ ՑԱՆԿԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԵՎ ՎԵՐԱՆԱՅՄԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԵՐԻ ՓՈՐՁԱԳԵՏՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 3-րդ գլխի հոդված 16-ի 4-րդ կետը և Հայաստանի Հանրապետության կառավարության 2010թ. մարտի 4-ի «Հայաստանի Հանրապետությունում նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության և ուսուցման մասնագիտությունների և որակավորումների՝ կարողությունների ձևավորմանը միտված պետական կրթական չափորոշիչների մշակման և ներդրման հայեցակարգին և գործողությունների ցանկին հավանություն տալու մասին» N 8 արձանագրային որոշումը՝

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ.

1. Հաստատել նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության պետական կրթական չափորոշիչների պարբերական վերանայման ցանկերի ձևավորման և վերանայման աշխատանքային խմբերի փորձագետների ընտրության ընթացակարգը՝ համաձայն հավելված 1-ի:

2. Հաստատել նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության պետական կրթական չափորոշիչներ վերանայող աշխատանքային խմբի մասնագետին ներկայացվող պահանջները՝ համաձայն հավելված 2-ի:

3. Սույն հրամանի կատարման հսկողությունը հանձնարարել նախարարի տեղակալ Մանուկ Մկրտչյանին:

ԼԵՎՈՆ ՄԿՐՏՉՅԱՆ

ԸՆԹԱՑԱԿԱՐԳ

ՆԱԽՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ (ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ) ԵՎ ՄԻՋԻՆ
ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԻ
ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՎԵՐԱՆԱՅՄԱՆ ՑԱՆԿԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԵՎ ՎԵՐԱՆԱՅՄԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԵՐԻ ՓՈՐՁԱԳԵՏՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն ընթացակարգով սահմանվում է նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության (այսուհետ՝ ՆՄՄԿ) պետական կրթական չափորոշիչների պարբերական վերանայման ցանկերի ձևավորման և վերանայման աշխատանքային խմբերի փորձագետների ընտրության ընթացակարգը:

2. Պետական կրթական չափորոշիչների վերանայման նպատակը՝ ապահովել մասնագիտական կրթական պետական չափորոշիչների սահուն ներդրումը և կիրառումը ուսումնական հաստատություններում, տվյալ մասնագիտական ոլորտը ամբողջության մեջ դիտարկելու միջոցով հստակեցնել ըստ մասնագիտությունների առանձնահատկությունների, մասնագիտացումների և որակավորումների խնդիրները, ինչպես նաև արդիականացնել ՄԿՈՒ համակարգի մասնագիտությունների և որակավորումների համար մշակված և ներդրված պետական կրթական չափորոշիչները:

II. ՆԱԽՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ (ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ) ԵՎ ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԻ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՎԵՐԱՆԱՅՄԱՆ ՑԱՆԿԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ

3. Յուրաքանչյուր տարի Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի ֆինանսավորմամբ վերանայման ենթակա չափորոշիչների ցանկը ձևավորում է ՀՀ կրթության և գիտության նախարարությունը (այսուհետ՝ Նախարարություն)՝ գործատուների,

մասնագիտական ուսումնական հաստատությունների, շահագրգիռ պետական կառավարման մարմինների և կազմակերպությունների առաջարկությունների հիման վրա:

4. ՆՄՄԿ պետական կրթական չափորոշիչների վերանայման ցանկերը ձևավորելու համար Նախարարության «Կրթության ազգային ինստիտուտ» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ ԿԱԻ) «Մասնագիտական կրթության և ուսուցման զարգացման ազգային կենտրոն» հիմնարկը (այսուհետ՝ ՄԿՈԻԶԱԿ) Նախարարություն առաջարկություն է ներկայացնում վերանայման ենթակա չափորոշիչների վերաբերյալ՝ հաշվի առնելով հետևյալ սկզբունքները.

1) համապատասխան որակավորմամբ մասնագետի նկատմամբ աշխատաշուկայի պահանջների փոփոխությունները, աշխատաշուկայի և կրթության ոլորտի զարգացումները,

2) ՆՄՄԿ ուսումնական հաստատություններում պետական կրթական չափորոշիչների փորձարկման արդյունքները,

3) ՆՄՄԿ ուսումնական հաստատություններում իրականացված մոնիթորինգի արդյունքները,

4) պետական կրթական չափորոշիչների վերաբերյալ գործատուների կողմից ներկայացված առաջարկությունները,

5) պետական կրթական չափորոշիչների վերաբերյալ ոլորտային հանձնաժողովների կողմից ներկայացված առաջարկությունները,

6) Ոլորտային հանձնաժողովի նախաձեռնությունը:

5. ՄԿՈԻԶԱԿ-ը ՆՄՄԿ ուսումնական հաստատությունների կողմից փորձարկման ընթացքի վերաբերյալ հաշվետվությունների, հաստատություններում իրականացված մոնիթորինգի արդյունքների վերլուծության, ինչպես նաև գործատուների և ոլորտային հանձնաժողովների կողմից տրամադրված պետական կրթական չափորոշիչների վերաբերյալ առաջարկների հիման վրա, կազմում է վերանայման ենթակա չափորոշիչների նախնական ցանկը:

6. Պետական կրթական չափորոշիչների փորձարկման մեկ ուսումնական պարբերաշրջանի ավարտից հետո, իսկ անհրաժեշտության դեպքում ավելի վաղ, դրվում է

ոլորտային հանձնաժողովի քննարկման՝ դրանում փոփոխություններ կատարելու կամ անփոփոխ թողնելու վերաբերյալ հարցը դիտարկելու և եզրակացություն ներկայացնելու նպատակով:

7. Առկա տեղեկատվության հիման վրա ՄԿՈՒԶԱԿ-ը ձևավորում է պետական կրթական չափորոշիչների վերանայման նախնական ցանկը և ներկայացնում Նախարարություն:

8. Յանկը հաստատելուց առաջ այն քննարկվում և հավանության է արժանանում Մասնագիտական կրթության և ուսուցման զարգացման ազգային խորհրդում (այսուհետ՝ ՄԿՈՒԶԱԿ): Վերանայման ենթական չափորոշիչների վերջնական ցանկը հաստատվում է Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի (այսուհետ՝ Նախարար) հրամանով:

III. ՆԱԽՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ (ԱՐՎԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ) ԵՎ ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐ ՎԵՐԱՆԱՅՈՂ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ

9. ՆՄՄԿ պետական կրթական յուրաքանչյուր չափորոշիչի վերանայման համար ձևավորվում է առանձին աշխատանքային խումբ:

10. Մասնագիտական կրթության պետական կրթական չափորոշիչներ վերանայող աշխատանքային խումբ ձևավորվում է ՆՄՄԿ ոլորտում համագործակցող գործատուների, ուսումնական հաստատությունների և տվյալ ոլորտի փորձառու մասնագետների ներգրավմամբ:

11. Ըստ մասնագիտությունների և որակավորումների մասնագիտական կրթության պետական կրթական չափորոշիչների նախագիծ մշակող աշխատանքային խմբի կազմում ընդգրկվելու նպատակով սոցիալական գործընկերները, ՆՄՄԿ ուսումնական հաստատությունները Նախարարության կողմից ուղարկված գրությունների հիման վրա 15-օրյա ժամկետում առաջադրում են թեկնածուներ:

12. Աշխատանքային խմբի ձևավորման համար անհրաժեշտ նվազագույն թվից պակաս թվով թեկնածուներ առաջադրված լինելու դեպքում ցուցակը ամբողջացնում է ՄԿՈՒԶԱԿ-ը՝ առկա փորձագետների տեղեկատվական բազայից:

13. Աշխատանքային խմբի կազմում ընդգրկվելու համար թեկնածուներ առաջադրող կառույցը պետք է հիմնավորի՝ երաշխավորական նամակի տեսքով, նախատեսվող առաջադրանքը կատարելու բնագավառում յուրաքանչյուր թեկնածուի արհեստավարժությունը:

14. Աշխատանքային խմբում ընդգրկվում է առնվազն 3 մասնագետ՝ հավելված 2-ով փորձագետին ներկայացվող պահանջներին համապատասխան.

1) մասնագիտության (որակավորման) բնագավառին առնչվող կազմակերպության ներկայացուցիչ՝ գործատու և/կամ տվյալ ոլորտի որակյալ մասնագետ,

2) ՆՄՄԿ ուսումնական հաստատության համապատասխան մասնագիտության (որակավորման) բնագավառի մասնագետ՝ դասավանդող և/կամ արտադրական ուսուցման վարպետ,

3) ՄԿՈՒԶԱԿ-ի մասնագետ, որի թվաքանակի պակասի դեպքում այն ամբողջացվում է ՄԿՈՒԶԱԿ-ում առկա փորձագետների տեղեկատվական բազայից:

15. Յուրաքանչյուր աշխատանքային խմբում Նախարարի հրամանով նշանակվում է խմբի ղեկավար, որի թեկնածությունը համատեղ առաջադրում են Նախարարության աշխատակազմի նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության վարչության պետը և ՄԿՈՒԶԱԿ-ի տնօրենը՝ խմբում առավել երկարատև աշխատանքային փորձ ունեցող, բանիմաց և արհեստավարժ անձին:

16. Խմբի ղեկավարի պարտականություններն են.

1) համակարգել խմբի անդամների աշխատանքը,

2) կազմակերպել առաջադրանքը կատարելու անհրաժեշտությամբ պայմանավորված հանդիպումներ և քննարկումներ,

3) ՄԿՈՒԶԱԿ-ին տրամադրել միջանկյալ հաշվետվություն աշխատանքների ընթացքի մասին,

4) խմբում ներառված գործատուների միջոցով ճշտել համապատասխան որակավորմամբ մասնագետի նկատմամբ աշխատաշուկայի պահանջների փոփոխությունները, զարգացումները և ձեռք բերված տեղեկատվության հիման վրա (ցանկալի է առաջատար գործատուների կողմից տվյալ տեղեկատվությունը հաստատող

փաստաթուղթ) հստակեցնել և լրամշակել համապատասխան մասնագետի որակավորման բնութագիրը:

17. Աշխատանքային խմբերի անվանական կազմը մեկամսյա ժամկետում, ըստ առաջադրված թեկնածուների (փորձագետի նկատմամբ պահանջների համապատասխանության դեպքում), ձևավորում է Նախարարությունը, որը հաստատվում է Նախարարի հրամանով:

18. Ձևավորված խմբի յուրաքանչյուր անդամի հետ ԿԱԻ-ին կնքում է ծառայությունների մատուցման պայմանագիր՝ հաստատված տեխնիկական առաջադրանքին համապատասխան:

19. Աշխատանքային խմբի աշխատանքներն ավարտվում են աշխատանքային պայմանագրով նախատեսված ժամանակացույցին համապատասխան:

ՆԱԽՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ (ԱՐՇԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ) ԵՎ
ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ԿՐԹԱԿԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐ ՎԵՐԱՆԱՅՈՂ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԻ
ՄԱՍՆԱԳԵՏԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

1. ՆՄՄԿ պետական կրթական չափորոշիչներ վերանայող աշխատանքային խմբում ընդգրկվող մասնագետը գործում է պայմանագրային հիմքով:

2. Մասնագետին ներկայացվող պահանջները.

1) Սույն հրամանով հաստատված ընթացակարգի հավելված 1-ի 14-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված մասնագետը պետք է ունենա համապատասխան ոլորտում առնվազն 3 տարվա աշխատանքային փորձ և տիրապետի վերանայվող չափորոշիչ որակավորմանը արտադրությունում (կամ համապատասխան այլ ոլորտում) համապատասխանող պաշտոնի (զբաղմունքի) շրջանակներում իրականացվող տեխնոլոգիական և այլ աշխատանքային գործընթացներին.

2) Սույն հրամանով հաստատված ընթացակարգի հավելված 1-ի 14-րդ կետի «բ» ենթակետով նախատեսված մասնագետը պետք է ունենա ՆՄՄԿ ուսումնական հաստատությունում առնվազն 3 տարվա դասավանդման փորձ, տիրապետի ՆՄՄԿ կազմակերպման առանձնահատկություններին, չափորոշիչների, մոդուլային ծրագրերի, արդյունքների գնահատման չափանիշների մշակման ու կազմման, ինչպես նաև ուսումնական պլանների կազմման մեթոդաբանությանը.

3) Սույն հրամանով հաստատված ընթացակարգի հավելված 1-ի 14-րդ կետի «գ» կետով նախատեսված մասնագետը պետք է ունենա առնվազն 3 տարվա աշխատանքային փորձ ՄԿՈՒԶԱԿ-ում և/կամ առնվազն 3 տարվա գիտամանկավարժական կամ կրթության կառավարման աշխատանքային փորձ: